ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ

ՕՐԵՆՍԳԻՐՔ

(Ընդունված է Հայաստանի Հանրապետության Ազգային
ժողովի կողմից 2002 թվականի հունիսի 4-ին)

Հոդված 10. Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը

Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը՝
20) լիցենզավորում է ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեությունը.

ԳԼՈՒԽ 4.1
(գլուխը լրաց. 21.12.15 ՀՕ-19-Ն)

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 37.1. Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործումը

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեությունը լիցենզավորման ենթակա է: Լիցենզիան տրվում է մեկ տարի ժամկետով:

Comment [RK1]: «20) «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրում է ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք.»:

Comment [RK2]: «Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեությունը ծանուցման ենթակա գործունեության տեսակ է: Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության ծանուցումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին:»:

Comment [RK3]: «Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող հաստոցների տեղադիրքն առցանց հետևելու տեխնիկական սարքավորումների տեղադրման և օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»: